Թեսթ 7
էքզյուպերի

Փոքրիկ իշխանը (հատված)

Ես շատ ուշ հասկացա, թե նա որտեղից էր եկել: Փոքրիկ իշխանն անընդհատ հարցեր էր տալիս, իսկ իմ հարցերը կարծես չէր լսում: Ինձ համար ամեն ինչ հետզհետե **պարզ** դար□ավ պատահական և հենց այնպես ասված նրա խոսքերից: Այսպես, երբ փոքրիկ իշխանն առաջին անգամ (տեսնել) իմ ինքնաթիռը, հարցրեց ինձ.

- Սա ի՞նչ առարկա է:

- Սա առարկա չէ: Սա թռչում է: Սա ինքնաթիռ է: Իմ ինքնաթիռը:

Եվ ես հպարտ-հպարտ հասկացրի նրան, որ թռչել գիտեմ:

- Ո՞նց թե,- բացականչեց նա,- դու երկնքի՞ց ես իջել:

- Այո՛,- համեստորեն պատասխանեցի ես:

- Ի՜նչ ես ասում, շատ հետաքրքիր է...

Եվ փոքրիկ իշխանն այնքա՜ն **գեղեցիկ**, այնքան զրնգուն ծիծաղեց, որ տրամադրությունս լրիվ փչացավ: Ես <u>չեմ սիրում երբ իմ ձախորդություններին անլուրջ են վերաբերվում:</u> Հետո նա ավելացրեց.

- Ուրեմն դու էլ ես երկնքից իջել: Իսկ ո՞ր մոլորակից ես եկել:

Ինձ թվաց, թե ես կռահեցի նրա խոր□րդավոր հայտնության գա□տնիքը և, առանց այլևայլության, հարցրի.

- Ուրեմն դու այլ մոլորակի՞ց ես եկել:

Բայց նա չպատասխանեց: Նա գլուխը մեղմորեն օրորում էր՝ հայացքը չկտրելով իմ ինքնաթիռից.

- Հնարավոր չէ. դու սրանով չէիր կարող շատ հեռվից գալ...

Նա (ընկնել) երազանքների գիրկը, և դա **երկար** տևեց: Այնուհետև, գրպանից հանելով իմ նկարած գառնուկը, սկսեց խորասուզված հիանալ իր գանձով:

Չեք կարող պատկերացնել, թե որքան ինձ հետաքրքրեց «այլ մոլորակների» մասին նրա կիսախոստովանությունը: Եվ ես փոր□եցի որքան հնարավոր է շատ բան իմանալ:

- Որտեղի՞ց ես եկել, սիրելի՛ մանչուկ: Որտե՞ղ է քո տունը: Ո՞ւր ես ուզում տանել իմ գառնուկին: Երկար ու լուռ մտորելուց հետո նա պատասխանեց.

- Լավ արեցիր, որ ինձ արկղ տվիր. գիշերներն իմ գառնուկը հենց նրա մեջ էլ կքնի:

- Դե իհարկե՛: Եվ եթե դեմ չես, քեզ կտամ նաև մի պարան, որպեսզի ցերեկվա ժամերին նրան (կապել): Ցից էլ կտամ:

- Նրան կապե՞մ... Դու էլ հո չասի՛ր:

- Ախր, եթե չկապես, գառնուկը կարող է գնալ՝ ուր խելքին փչի, ու մի տեղ կկորչի...

Եվ իմ բարեկամը նորից զրնգուն ծիծաղեց.

- Բայց ո՞ւր կարող է գնալ:

- Ուր խելքին փչի: Կգնա **ուղիղ,** մինչև...

Փոքրիկ իշխանը լուրջ տեսքով ընդհատեց ինձ.

- Ոչինչ, թող գնա, իմ տունը շա՛տ փոքր է:

Նա կարծես մի քիչ (տխրել), հետո շարունակեց.

- Եթե անընդհատ ուղիղ գնաս, շատ հեռու չես գնա...

1. դարձավ, գաղտնիքխտնիքը , խորհրդավոր

2. Ի՞նչ է նշանակում անընդհատ բառը.

ա/ չընդհատվող
բ/ ընդհանուր
գ/ընդհանրապես
դ/ հատ-հատ

3. Դու՛ս գրիր թավ և ընդգծված բառերի հականիշները.

պարզ-բարդ

գեղեցիկ-տգեղ

երկար-կարճ

ուղիղ-ծուռ

4. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը:
ա/ մեղմորեն – ածանցավոր
բ/ ինքնաթիռ - բարդ
գ/ մանչուկ - ածանցավոր
դ/ տուն – ածանցավոր:

5. Տրված բառերը դարձրո՛ւ հոգնակի.
ա/ հարց-հարցեր
բ/ նկար-նկարներ
գ/ գառ-գառներ
դ/ մոլորակ-մոլորակներ

6. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է:
Ո՞րն է սխալ.
ա/երկար - ածական
բ/ մոլորակ – գոյական
գ/ ինքնաթիռ – գոյական
դ/ փոքրիկ - գոյական

7. Դու՛ս գրիր այն նախադասությունները, որոնցում առկա են փակագծերում առնված բայերը և դի՛ր անհրաժեշտ ձևով (համապատասխանե-ցրո՛ւ տեքստին):

Այսպես, երբ փոքրիկ իշխանն առաջին անգամ տեսավ իմ ինքնաթիռը, հարցրեց ինձ.

Եվ եթե դեմ չես, քեզ կտամ նաև մի պարան, որպեսզի ցերեկվա ժամերին նրան կապես: Ցից էլ կտամ:

Նա կարծես մի քիչ տխրեց, հետո շարունակեց.

Նա ընկավ երազանքների գիրկը, և դա **երկար** տևեց: Այնուհետև, գրպանից հանելով իմ նկարած գառնուկը, սկսեց խորասուզված հիանալ իր գանձով:

8. Տրված նախադասության մեջ գտի՛ր ենթական և ստորոգյալը:
Նա գլուխը մեղմորեն օրորում էր:
ենթակա _____նա_____
ստորոգյալ _____օրորում_____

10. Տեքստում ընդգծված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան:
Լրացրո՛ւ :
Ես <u>չեմ սիրում, երբ իմ ձախորդություններին անլուրջ են վերաբերվում:</u>
11. Դո՛ւրս գրիր փոքրիկ իշխանի ծիծաղը բնութագրող բառերը:
գեղեցիկ և զրնգուն

12. Ինչո՞ւ հեղինակի տրամադրությունը փչացավ.
ա/ ինքնաթիռը գեղեցիկ չէր նկարել
բ/նա չէր սիրում, որ իր ձախորդություններին անլուրջ էին վերաբերվում
գ/ փոքրիկ իշխանը իր նկարած ինքնաթիռը չէր հավանել
դ/փոքրիկ իշխանը չհրավիրեց իր մոլորակ

13. Փոքրիկ իշխանը ի՞նչ հարցրեց, երբ առաջին անգամ տեսավ ինքնաթիռը.
- Սա ի՞նչ առարկա է:

14. Հեղինակի կարծիքով՝ ո՞ւր կարող էր գնալ գառնուկը.

Գառնուկը կարող է գնալ՝ ուր խելքին փչի:
15. Բացատրի՛ր «Ուղիղ գնաս, շատ հեռու չես գնա» միտքը:
Մոլորակը կլոր է ու ուր գնաս նույն տեղը կհասնես: